

Հ-89
ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԼԵՎՈՆ ՍԱՀԱԿԻ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ
20-ԸՂ ԴԱՐԻ ՎԵՐՁԵՐԻՆ - 21-ԸՂ ԴԱՐԻ ՍՎԶԲՆԵՐԻՆ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ՀՀ ԳԱՒԱ ՈՂՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ
ՀԱՅԳԱՐԾԻՄ ԶԻՆՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ
ԱՍՏԻՃԱՆԻ ԿԱՆԿԱՐԳՈՒՄԸ

19.11.12թ.

ԵՐԵՎԱՆ 2012

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆ.՝ Մաֆրաստյան Ռ.Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր՝
Ավագյան Ա.Գ.
պատմական գիտությունների թեկնածու՝
Դումանյան Ա.Դ.

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012 թ. դեկտեմբերի 20-ին,
ժ.15.00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ
ԲՈՂ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական
խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ
արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2012 թ. նոյեմբերի 16-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, պ.գ.թ.

Ղազարյան Ռ.Պ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Թուրքիայի զինված ուժերի (այսուհետ՝ ՋՈւ) արդիականացման համալիր ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ կիրառական կարևոր նշանակություն: Թեմայի համակողմանի ուսումնասիրությունն արդիական է ոչ միայն 20-րդ դարի վերջերին ու 21-րդ դարի սկզբներին Թուրքիայի բանակի արդիականացման քաղաքականությունն ու ռազմավարությունն ընկալելու, այլ նաև այդ երկրի ռազմականացման ժամանակակից միտումներն ու ծավալները վերհանելու և համարժեքորեն գնահատելու տեսանկյունից:

Թուրքիայի ՋՈւ-ի արդիականացման միտումների ուսումնասիրումը կարևոր է այն տեսանկյունից, որ Թուրքիան վարում է տարածաշրջանում ռազմաքաղաքական ազդեցությունն ընդլայնելու և տարածաշրջանային գերտերության կարգավիճակ ձեռք բերելու քաղաքականություն, իսկ ռազմական ներուժն այդ համատեքստում դիտարկում է առաջնային գործոններից մեկը:

Հաշվի առնելով իր որոշ հարևանների հետ Թուրքիայի գրեթե մշտապես լարված հարաբերությունները, վերջին շրջանում Գիպրոսի Հանրապետության ու Սիրիայի Արաբական Հանրապետության հետ լարվածության աճն ու նրանց նկատմամբ ռազմական ուժ գործադրելու սպառնալիքները՝ առավել ակնառու են դարձնում Թուրքիայի սպառազինման, ռազմականացման վտանգավորությունը տարածաշրջանային անվտանգության ու կայունության տեսանկյունից: Մեծ հաշվով իր շրջակայքում ագրեսիվ վարքագիծը պայմանավորված է իր ռազմական ներուժից բխող մեծ ինքնավստահությունից:

Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության հիմնական միտումները, ռազմաքաղաքական հավակնությունները, որոշ հարևանների նկատմամբ ագրեսիվ քաղաքականությունն ու այդ երկրի անկանխատեսելիության գործոնը, հատկապես տարածաշրջանում ռազմաքաղաքական զարգացումների, անկայուն իրավիճակի ու լարվածության նոր օջախների առաջացման համատեքստում, իրատարդիական են դարձնում Թուրքիայի ռազմական արդիականացման ու պաշտպանական քաղաքականության ուսումնասիրությունը՝ անկանխատեսելի զարգացումների դեպքում հնարավոր ռազմական միջամտության ու ազդեցության տեսանկյունից:

Թեմայի ուսումնասիրությունն առնչություն ունի Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության և Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի հետ: Մասնավորապես՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ որպես արտաքին սպառնալիք նշված է, որ Ադրբեյջանի Հանրապետության

կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանդեպ զինված ուժի կիրառման բացահայտ սպառնալիքների պարագայում Թուրքիայի Հանրապետությունը, լինելով Ադրբեջանի ռազմավարական դաշնակիցը, նույնպես կարող է սպառնալիք ստեղծել: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ստանում աշխատանքում թուրք-ադրբեջանական ռազմատեխնիկական համագործակցության միտումներին կատարված անդրադարձը:

Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինում որպես ռազմական անվտանգության արտաքին սպառնալիքներ են նշված անվերահսկելի սպառազինման և վերազինման գործընթացը, սպառազինությունների մրցավազքը, Հայաստանի Հանրապետության սահմանների մոտ գորքերի խմբավորումների ստեղծումը, տեղաբաշխումը, դրանց խոշորամասշտաբ կուտակումները և տեղաշարժը, այդ թվում՝ գորավարժությունների անվան տակ: Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված դաշինքների ստեղծումը, ամրապնդումն ու ընդլայնումը, մասնավորապես՝ Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության ռազմավարական դաշինքը, վերջինիս կողմից Հայաստանի Հանրապետությունը շրջափակելու քայլերը, որոնք դիտարկվում են որպես ուժի կիրառում, Հայաստանի Հանրապետությանը սահմանակից պետություններում ներքաղաքական միջավայրի ապակայունացումը, ներքին բախումներն ու ռազմական գործողությունները, ինչպես նաև էթնիկական հակամարտությունները, որոնք կարող են սպառնալ Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությանը: Նման ձևակերպումներից էլնելով՝ ակնհայտ է, որ Թուրքիայի կողմից իրականացված և իրականացվող ռազմական արդիականացման խոշորամասշտաբ ծրագրերը սպառազինությունների նոր մրցավազքի են հանգեցնում տարածաշրջանում: Բացի այդ, Թուրքիայի և Ադրբեջանի միջև սերտ ռազմական ու ռազմատեխնիկական համագործակցությունն ուղղակի սպառնալիք է ներկայացնում Հայաստանի ազգային անվտանգությանը: Հաշվի առնելով Թուրքիայի հետ ընդհանուր սահմանի առկայությունն ու այդ երկրի արևելյան շրջաններում Թուրքիայի կողմից «Քուրդիստանի բանվորական կուսակցության» դեմ իրականացվող գործողությունները ոչ այլ ինչ են, քան ռազմական գործողություններ, և դրանք կարող են դուրս գալ վերահսկողությունից ու լուրջ ազդեցություն ունենալ տարածաշրջանային անվտանգության վրա, կարող են իրենց ազդեցությունն ունենալ նաև Հայաստանի անվտանգության վրա: Այս համատեքստում Թուրքիայի ռազմական արդիականացման, սպառազինման միտումների ու պաշտպանական քաղաքականության ուսումնասիրումն ու վերհանումը կարևոր ու արդիական է ոչ միայն տարածաշրջանային անվտանգության, այլ նաև Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության ռազմական անվտանգության գործոնների դիտարկման տեսանկյունից:

Ատենախոսության նպատակներն ու խնդիրները: Ատենախոսության թեմայի ընտրության նպատակը մեկ ամբողջության մեջ 20-րդ դարի վերջերին և 21-րդ դարի սկզբներին Թուրքիայի պաշտպանական ոլորտի արդիականացման գործընթացի ուսումնասիրումն է ու այդ հիմքի վրա գնահատումը ցույց տալով Թուրքիայի ԶՈւ-ի համալիր արդիականացման միտումներն ու իրականացված ծրագրերը, ռազմաարդյունաբերական համալիրի կայացման ու զարգացման գործընթացը:

Ուսումնասիրության համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

1. Ներկայացնել Սառը պատերազմի տարիներին Թուրքիայի պաշտպանական համակարգի կայացման ու զարգացման գործում Արևմուտքի դերը, ՆԱՏՕ-ի ու հատկապես ԱՄՆ-ի կողմից այդ երկրին տրամադրված ռազմական ու ռազմատեխնիկական հիմնական աջակցության նշանակությունն ու համագործակցության միտումները:
2. Ուսումնասիրել Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի պաշտպանական քաղաքականության վերաձևավորումները, անվտանգության մարտահրավերներն ու դրանց հակազդման հիմնական հայեցակարգային մոտեցումներն ու հրամայականները:
3. Ներկայացնել ու վերլուծել 1990-ական թթ. նախաձեռնված բանակի արդիականացման գործընթացն ու այդ ուղղությամբ իրականացված քայլերը:
4. Վերհանել Թուրքիայի ազգային ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծման հրամայականի առաջացման պատճառներն ու վերլուծել այդ համալիրի կազմակերպչա-կառուցվածքային բազայի հիմնման քաղաքականությունն ու ծրագրերը:
5. Պաշտոնական փաստաթղթերի, տեղեկագրերի ու այլ նյութերի ուսումնասիրության միջոցով ցույց տալ ազգային ռազմաարդյունաբերության զարգացման հիմնական միտումները, գնահատել գրանցած ձեռքբերումներն ու բանակի արդիականացման գործում դրանց դերակատարությունը:
6. Ադրբեջանի, Վրաստանի ու կենտրոնասիական թուրքալեզու երկրների հետ համագործակցության օրինակով վեր հանել և բացահայտել ազգային ռազմաարդյունաբերության ու ռազմական ներուժի հնարավորությունների կիրառմամբ ռազմական մատակարարի դերում հանդես գալու Թուրքիայի նկրտումները:

7. Դիտարկել Թուրքիայի անվտանգության ու պաշտպանության ոլորտում իրականացված համակարգային բարեփոխումների խնդիրը:

8. Ուսումնասիրել ՋՈւ-ի համակարգում իրականացված արդիականացման ծրագրերն ու ռազմատեխնիկական նախագծերն ըստ գորքերի տեսակների, վեր հանել սպառազինման միտումներն ու ռազմատեխնիկական համագործակցության շրջանակներն այլ երկրների հետ, ցույց տալ ռազմականացման ծավալները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության թեման դեռևս չի արժանացել համապարփակ ու համալիր ուսումնասիրման: Հայ և օտարազգի մի շարք փորձագետներ ու ուսումնասիրողներ, անդրադարձել են այդ թեմային, որոնք, սակայն, ամբողջական չեն և վերաբերում են միայն առանձին ոլորտներին: Աշխատանքն իր բովանդակությամբ ու հարցադրումներով առաջինն է, որտեղ փորձ է արվում ուսումնասիրել, ներկայացնել ու վերհանել Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հիմնական միտումները, ՋՈւ-ի համալիր արդիականացման զարգացման գործընթացը, դրա ռազմաքաղաքական պատճառներն ու նշանակությունը, ռազմականացման հիմնական միտումները՝ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք թուրքական, ամերիկյան պաշտոնական փաստաթղթեր, տեղեկագրեր, ինչպես նաև այլ աղբյուրներ ու վերլուծական գրականություն:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ատենախոսության ժամանակագրական սահմանները ընդգրկում են 20-րդ դարի վերջերն ու 21-րդ դարի սկզբները՝ 1990-ական թթ. սկզբից մինչև 2010 թ. ներառյալ: Ժամանակագրության սկիզբը հանդիսանում է 1990-ական թթ. սկիզբը, երբ Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիան նախաձեռնեց պաշտպանական նոր քաղաքականություն և ակտիվացրեց ՋՈւ-ի արդիականացման ծրագրերը: Ժամանակագրությունն ընդգրկում է մինչև 2010 թ. ներառյալ: Նման ժամանակագրության ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ շրջանում պաշտպանական ոլորտում Թուրքիայի իրականացրած արդիականացման ծրագրերն իրենց մասշտաբով ու նշանակությամբ աննախադեպ էին: Որոշ իրադարձությունների՝ ավելի ամբողջական ու ավարտուն ներկայացման անհրաժեշտությունից ելնելով՝ տեղ են գտել նաև 2011 թ. որոշ փաստեր ու զարգացումներ:

Հաշվի առնելով ատենախոսության համար պատմական որոշակի ժամանակաշրջանի ներկայացման կարևորությունը՝ անհրաժեշտ ենք համարել հակիրճ անդրադառնալ Սառը պատերազմի տարիներին Թուրքիայի պաշտպանական համակարգի կայացման ու զարգացման հարցում ՆԱՏՕ-ի

ու հատկապես ԱՄՆ-ի ցուցաբերած ռազմական օգնությունն ու օժանդակության ծրագրերը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Աշխատանքի մեթոդաբանական հիմքում դրված է պատմականության և գիտական օբյեկտիվության սկզբունքը, ինչի շնորհիվ հնարավոր է դարձել իրադարձությունները դիտարկել ոչ թե առանձնացված, այլ ժամանակի և դիալեկտիկական կապի մեջ: Բազմաթիվ տեղեկագրերի, փաստաթղթերի, մամուլի և ուսումնասիրությունների համադրումն ու վերլուծությունը հնարավորություն է տվել թեման ուսումնասիրել մեկ ամբողջության մեջ: Ելնելով հետազոտության թեմայի բազմաշերտ ու բազմակողմ բնույթից՝ աշխատանքում օգտագործվել են պատմավերլուծական, պատմա-քաղաքագիտական քննության մեթոդներն ու միջգիտակարգային հետազոտության մոտեցումները: Թուրքիայի ռազմականացման ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության ու կայունության վրա դիտարկվել է գնահատողական մոտեցման հիման վրա: Տեղ են գտել նաև քաղաքագիտական ուսումնասիրության համեմատական, համակարգային, գործընթացային մոտեցումները: Պաշտոնական փաստաթղթերը, տեղեկագրերը, նորմատիվ իրավական ակտերը ուսումնասիրվել են բովանդակային վերլուծության մեթոդով (կոնտենտ անալիզ): Հաշվի առնելով տարբեր տվյալների ու մեծածավալ փաստերի օգտագործումը՝ կիրառվել է նաև վիճակագրական տվյալների համակարգում և վերլուծություն:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Ատենախոսության հիմնական բովանդակությունը, դրույթներն ու եզրահանգումները կարող են հիմք հանդիսանալ Թուրքիայի անվտանգության ու պաշտպանության բնագավառի հետագա ուսումնասիրությունների համար, կիրառվել բուհական դասախոսություններում և ռազմաքաղաքական ուղղվածության հատուկ դասընթացներում: Աշխատության դրույթները կարող են օգտակար լինել պետական համապատասխան գերատեսչությունների ու մարմինների համար տեղեկագրային ու վերլուծական բնույթի նյութեր պատրաստելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ու ռազմական անվտանգության հայեցակարգային մշակումների հարցում: Սույն թեմայի ուսումնասիրումը գործնական կարևորություն է ներկայացնում ոչ միայն տարածաշրջանային անվտանգության խնդիրներին ու զարգացումներին, այլ նաև Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության արտաքին գործոնների գնահատման ու վերլուծության տեսանկյունից:

Աշխատանքի փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները

ներկայացվել են հեղինակի կողմից հրատարակված մենագրությունում, գիտական հոդվածներում, երիտասարդ արևելագետների հանրապետական գիտաժողովներում ներկայացված զեկուցումներում, Թուրքիայի ժամանակակից հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովներում ու կլոր սեղանների քննարկումներում: Ատենախոսությունը քննարկվել է հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի կողմից:

Օգտագործված աղբյուրների ու գրականության տեսություն: Աշխատանքը գրվել է հայերեն, ռուսերեն, թուրքերեն, պարսկերեն ու անգլերեն լեզուներով տարբեր աղբյուրների ու տեղեկատվավերլուծական գրականության հիման վրա: Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուրներ են օգտագործվել թուրքական պաշտոնական փաստաթղթերը, տեղեկագրերն ու մի շարք զեկույցներ, ինչպես օրինակ՝ Թուրքիայի «Պաշտպանական արդյունաբերության քաղաքականությունը և ռազմավարությունը» փաստաթուղթը (Türk Savunma Sanayii Politikası ve Stratejisi), Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչության գործունեության տարեկան զեկույցները, «Պաշտպանական արդյունաբերության 2007-2011 թթ. ռազմավարական պլան»-ը (Savunma Sanayii Müsteşarlığı Stratejik Plan 2007-2011), Թուրքիայի ազգային պաշտպանության նախարարության 2008 թ. գործունեության տարեկան զեկույցը (Milli Savunma Bakanlığı, Faaliyet Raporu 2008), առանձին ռազմաարդյունաբերական ընկերությունների տարեկան հաշվետվությունները (Aselsan: Faaliyet Raporu 2008, Havelsan, 2007 Faaliyet Raporu, Makin ve Kimya Endüstrisi Genel Müdürlüğü, 2008 yılı Faaliyet Raporu), Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների կազմակերպության (TÜBİTAK) փաստաթղթերը և այլն¹: Ռուսերեն և անգլերեն

¹ Savunma Sanayii Politikası ve Stratejisi, Vizyon 2023 Projesi, Savunma, Havacılık ve Uzay Paneli, Panel Raporu, Ek-12, TÜBİTAK, Ankara, Temmuz 2003, http://www.tubitak.gov.tr/tubitak_content_files/vizyon2023/shu/EK-12.pdf; Savunma Sanayii Müsteşarlığı 2008 Yılı Faaliyet Raporu, <http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2008%20Yılı%20Faaliyet%20Raporu.pdf>; Savunma Sanayii Müsteşarlığı 2010 Faaliyet Raporu, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2010/files/ssm_2011.pdf; Savunma Sanayii Müsteşarlığı Stratejik Plan 2007-2011, <http://www.sp.gov.tr/documents/planlar/SSMSP0711.pdf>; Aselsan: Faaliyet Raporu 2008, <http://www.aselsan.com.tr>; Makina ve Kimya Endüstrisi Kurum Genel Müdürlüğü 2008 yılı Faaliyet Raporu, <http://www.mkek.gov.tr/Icerikler/KFrQEJW.pdf>; Türk Savunma, Havacılık ve Uzay Sektörü Değerlendirmesi, Vizyon 2023 Projesi, Savunma Havacılık ve Uzay Sanayii Panel Raporu/Ek-4, TÜBİTAK, Ankara, Temmuz 2003, http://www.tubitak.gov.tr/tubitak_content_files/vizyon2023/shu/EK-04.pdf; Türk Uzay

լեզուներով օգտագործվել են ԽՄՀՄ Արևելագիտության ինստիտուտի տեղեկագրերը, ՌԴ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տեղեկագրերից, Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի (SIPRI) և Ռազմավարական ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտի (IISS) տարեգրքերից ու տեղեկատվական բազայից²: Որպես կարևոր սկզբնաղբյուրներ են օգտագործվել ամերիկյան ու թուրքական մի շարք տեղեկագրային հրատարակություններ, ինչպես օրինակ՝ «Human Rights Watch» կազմակերպության ու Թուրքիայի Տեսեսական ու սոցիալական հետազոտությունների հիմնադրամի (TESEV) զեկույցները³: Թուրքիայի ռազմաարդյունաբերական նախագծերի ու սպառազինման ծրագրերի հետ կապված փաստական տվյալների ու տեղեկատվության ստացման առումով օգտագործվել են Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչության «Savunma Sanayii Gündemi» պաշտոնական պարբերականի համարները⁴:

Sektörüne İlişkin Değerlendirme, Savunma Havacılık ve Uzay Sanayii Panel Raporu/Ek-5, TÜBİTAK, Ankara, Temmuz 2003, http://www.tubitak.gov.tr/tubitak_content_files/vizyon2023/shu/EK-05.pdf.

² Современная Турция, справочник, Москва. Изд. восточной литературы. 1958; Современная Турция. справочник, Москва. «Наука», 1975; Турецкая Республика, справочник. Москва. «Наука», 1975; Вооруженные силы и военная экономика стран Азии// Информационно-аналитический справочник. Институт Востоковедения РАН, Москва 2000; The Military Balance 2009, International Institute for Strategic Studies, London: Routledge 2009; The Military Balance 2010, International Institute for Strategic Studies, London: Routledge 2010; SIPRI Arms Transfers Database, http://www.sipri.org/contents/armstrad/at_data.html; Military Expenditure, SIPRI Yearbook 2011, Armaments, Disarmament and International Security, Oxford University Press 2011;

³ Turkey Export-import Trade and Business Directory, International Business Publications, USA, Vol. 2, 2007; Weapons Transfers and Violations of Laws of War in Turkey, Human Rights Watch Arms Project, USA 1995; Turkey, The General Directorate of Press and Information, GAYE Matbaacılık Sanayi ve Ticaret AŞ, Ankara, October 1990; Almanak Türkiye 2006-2008: Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, ed. A. Bayramoğlu, A. Insel, TESEV, Temmuz 2009, http://www.tesev.org.tr/Upload/Publication/e8b2801a-bde2-45a0-a736-da06acb7416c/almanak2008_02_07_09.WEB%20icin.pdf; Almanak Türkiye 2006, http://www.byegm.gov.tr/YA_YINLARIMIZ/kitaplar/turkiye2006/turkey/244-245.htm; Almanak Türkiye 2005, Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, ed. Ümit Cizre, DCAF-TESEV Güvenlik Sektörü Çalışmaları Dizisi Özel Yayın, TESEV-Mayıs 2006, <http://www.tesev.org.tr/Upload/Publication/c2e4e702-300a-4b46-b48e-ba55e802087b/Almanak-2005-Turkce-Tam%20Metin.pdf>;

⁴ Türk Savunma Sanayii 2010 Yılı Performansı, Savunma Sanayii Gündemi, Sayı 15, 2/2011, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/SSM%20Dergisi/SSM_15.pdf; ALTAY Projesi, Milli İmkanlarla Modern Tank Üretimi, Savunma Sanayii Gündemi, Savunma Sanayi Müsteşarlığı, Temmuz 2008, <http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/SSM%20Dergisi/2008-7-ssm->

Օգտագործվել են նաև թուրք մի շարք հեղինակների հոդվածներն ու մենագրությունները: Դրանցից կարող ենք, օրինակ նշել Ն. Ուլուի, Ս. Յըլմազի, Գ. Գյունլյուք Շենետենի, Հ. Գերգերի, Ու. Օզդաղի, Գ. Քորքմազի, Ի. Աքչայի, Ու. Ջիզրե Մաքալիօղլուի, Շ. Էրգյուվենչի, Շ. Ուրումի, Շ. Էլեքդաղի, Ա. Քյուլեբիի, հոդվածներն ու աշխատությունները⁵, որոնք այս կամ այն կերպ անդրադառնում են Թուրքիայի պաշտպանական քաղաքականության ու բանակի հիմնախնդիրներին: Որոշ հեղինակներ շատ հաճախ ցուցաբերում են խիստ ուռճացված ու գաղափարականացված մոտեցումներ Թուրքիայի տարածաշրջանային դերին ու նշանակության անդրադառնալիս: Աշխատանքի պատրաստման հարցում մեծ կարևորություն է ունեցել Բ. Օրանի խմբագրությամբ «Թուրքական արտաքին քաղաքականությունը» երկհատորյակը⁶, ինչպես նաև Գ. Գյունլյուք Շենետենի «Թուրքիայի զինված

ուժերի արդիականացման ծրագրի գնահատականը» ուսումնասիրությունը⁷, որոնցում հեղինակներն անդրադարձել են նաև Թուրքիայի բանակի արդիականացման ռազմավարության ու ռազմաարդյունաբերության խնդիրներին: Օգտագործվել են նաև թուրք բարձրաստիճան զինվորականների, պետական պաշտոնյաների հոդվածներ, հրապարակումներ ու ելույթներ⁸:

Հայրենական հեղինակներից սույն աշխատության համար օգտագործվել են Ռ. Սաֆրաստյանի, Ա. Ավագյանի, Ս. Մինասյանի, Ս. Մելքոնյանի, Ա. Այվազյանի, Ս. Աղաջանյանի և մի շարք այլ հեղինակների արժեքավոր հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնք անդրադառնում են Թուրքիայի ռազմաքաղաքական հիմնախնդիրներին ու պաշտպանական ոլորտին⁹: Մասնավորապես Ռ. Սաֆրաստյանն իր «Հնարավոր չէ 21-րդ

dergi.pdf; Milli Gemi Projesi, Denizaltı Savunma Harbi ve Keşif Karakol Gemisi, Savunma Sanayii Gündemi, Savunma Sanayii Müsteşarlığı, Sayı: 2, Ekim 2007.

⁵ Nasuh Uslu, The Turkish-American Relationship Between 1947 and 2003: The History of a Distinctive Alliance, Nova Science Publisher Inc., New York 2003; Sait Yılmaz, Dünya Ordularındaki Değişim ve Türk Ordusunun Profesyonelleşmesi, [http://orkam.aydin.edu.tr/ORDUNUNPROFESYONELLESMESI\(3a4b\).pdf](http://orkam.aydin.edu.tr/ORDUNUNPROFESYONELLESMESI(3a4b).pdf), Gülay Günlük Şenesen, Türk Silahlı Kuvvetleri'nin Modernizasyon Programının Bir Değerlendirmesi, Türk Dış Politikasının Analizi, ed. Faruk Sönmezoglu, DER yayınları, İstanbul 2001; Haluk Gerger, Türk Dış Politikası'nın Ekonomi Politikası, Soğuk Savaş'tan Yeni Dünya Düzeni'ne, İkinci Baskı, İstanbul, Belge Yayınları 1999; Ümit Özdamar, Ersel Aydın, Winning A Low Intensity Conflict: Drawing Lessons From The Turkish Case, Democracies and Small Wars, ed. Efraim Inbar, London, Frank Cass 2003; Goksel Korkmaz, An Analysis of Turkey's Defense Systems Acquisition Policy, MBA Professional Report, Naval Postgraduate School, Monterey-California, March 2009; İsmet Akıncı, Türkiye'de Askeri-İktisadi Yapı: Durum, Sorunlar, Çözümler, TESEV Yayınları, İstanbul, Haziran 2010; Umit Cizre Sakallıoğlu, The Military and Politics: A Turkish Dilemma, Armed forces in the Middle East: politics and strategy, ed. Barry M. Rubin, Thomas A. Keane, Frank Cass Publishers 2002; Sadi Ergüvenç, Turkey's Security Perceptions, Journal of International Affairs, Vol. 3, N. 2, June-August 1998, <http://sam.gov.tr/wp-content/uploads/2012/02/SadiErguvenç.pdf>; Şebnem Udum, Missile Proliferation in the Middle East: Turkey and Missile Defence, Turkish Studies Institute, Vol. 4, N. 3, 2003; Şükrü Elekdağ, 2 ½ War Strategy, Perceptions, Journal of International Affairs, Vol. 1, March May, 1996, <http://www.sam.gov.tr/perceptions/Volume1/March-May1996/212WARSTRATEGY.pdf>; Ali Külebi, Türkiye'nin Askeri Stratejisi, Gücü ve Geleceği, Türkiye Stratejik Araştırmalar Merkezi (TUSAM), 02.08.2004; Ali Külebi, Defense Concept of Turkey is Changing, April 2008, <http://www.eurasiacritic.com/articles/defence-concept-turkey-changing>;

⁶ Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 1, (1919-1980), İstanbul, İletişim yayınları 2002; Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 2, (1980-2001), İstanbul, İletişim yayınları 2002;

⁷ Gülay Günlük Şenesen, Türk Silahlı Kuvvetleri'nin Modernizasyon Programının Bir Değerlendirmesi, Türk Dış Politikasının Analizi, ed. Faruk Sönmezoglu, DER yayınları, İstanbul-2001;

⁸ Hikmet Sami Türk. Turkish Defense Policy. The Washington Institute For Near East Policy, March 3, 1999, <http://www.washingtoninstitute.org/media/samiturk.htm>; Suat İlhan, Geopolitical developments and the Turkish world, Eurasian Studies, TİKA, Vol. 2, N. 3, 1995; A STATEMENT by TAFF, Defence Turkey, Vol. 2 Issue: 7, 2007; Luncheon Remarks by General İlker Başbuğ, Deputy Chief of Turkish General Staff, http://www.tsk.tr/eng/konusma/gnkurIIIncibsk_atckonusmasioglyemegi_eng_06062005.htm; FNSS A Leader Company in Armored Combat Vehicles / Interview with Mr. Nail Kurt, Defence Turkey, Volume 2, Issue 10, 2008; Ռ. Թ. Էրդողանի ելույթը 2008 թ. Altay տանկերի արտադրության պայմանագրի ստորագրման հանդիսավոր արարողության ժամանակ՝ <http://www.netizle.tv/video/13443/milli-tank-altay-2011-de-silahlı-kuvvetlere-katılıyor>;

⁹ Ռ. Սաֆրաստյան, Հնարավոր չէ 21-րդ դարում պատերազմներ ստեղծել հարևանների միջև..., Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային հոլովույթներում /2001-2003 թվականների հոդվածներ և հարցազրույցներ/, Եր. 2003; Ա. Ավագյան, Բանակի դերը Թուրքիայի տնտեսական համակարգում, Հայկական բանակ, թիվ 4, 2006; Ս. Մինասյան, Իսրայել-թուրքական ռազմաքաղաքական համագործակցությունը քրդական հիմնախնդրի համատեքստում, «21-րդ դար», N. 4, Երևան, 2006; Ս. Մինասյան, Թուրքական հանրապետության զինված ուժերը, Թուրքիա. Անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները.-Եր.: Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Վերլուծական նյութեր, թողարկում 1, 2007; Ս. Մելքոնյան, Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները, Հայ զինվոր, թիվ 7, 20-27 փետրվար, 1999; Ա. Այվազյան, Հայաստանի պաշտպանական հայեցակարգը, Ռազմավարության և անվտանգության հարցեր, Ա. Այվազյանի խմբ., «Հայրենասիրություն» մատենաշար 2, «Արարատ» ռազմավարական կենտրոն, Եր. 2007; Ս. Աղաջանյան, Թուրքիայի ազգային անվտանգությունը. հայեցակարգերն ու սկզբունքները, Թուրքիա. Անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները.-Եր.: Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Վերլուծական նյութեր, թողարկում 1, 2007:

դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև..., Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային հոլովոյթներում» հոդվածների ժողովածուում հանգամանորեն ներկայացնում և վեր է հանում ժամանակակից Թուրքիայում առկա աշխարհաքաղաքական տեսություններն ու մոտեցումները քաղաքական ու գիտական շրջանակներում, որոնք հնարավորություն են տալիս ավելի հստակ պատկերացնել ինչպես Թուրքիայի արտաքին քաղաքականության, այնպես էլ պաշտպանական քաղաքականության հիմնական միտումները: Այս համատեքստում կարևոր է նաև Ա. Այվազյանի «Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի» մենագրությունը, որտեղ Թուրքիայի պաշտպանական ռազմավարությունը գնահատվում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության տեսանկյունից¹⁰:

Արևմտյան հեղինակներից հիշատակման արժանի են Ջ. Ջանոտիի, Ու. Հեյլի, Յ. Օ. Լեստերի, Ու. Դարբի, Ն. Գիլբի, Ռ. Վեյցի հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնցում առնչություններ կան ատենախոսության թեմայի հետ¹¹: Մասնավորապես՝ հենց Թուրքիայի ՋՈւ-ի արդիականացման ու ռազմարդյունաբերության մի շարք հիմնախնդիրներին են նվիրված Ս. Թուրքերթի, Ջ. Էլիսոնի, Է. Շուրի, Է. Հեն-Թովի, Ս. Ռոբերտ Հիկքոքի ուսումնասիրությունները: Ամերիկացի հետազոտող Ս. Ռոբերտ Հիկքոքն իր «Գերիշխանության բարձրացում. Թուրքիայի ռազմավարության ու ռազմական արդիականացման միջև ճեղքը» արժեքավոր ուսումնասիրության մեջ օրյեկտիվ ու անկողմնակալ անդրադարձ է կատարում հատկապես 90-ական թթ. Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հայեցակարգային առանձնահատկություններին ու բանակի արդիականացման ռազմավարությանը՝ իրավացիորեն դրանք գնահատելով որպես տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից

¹⁰ Ա. Այվազյան, Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի, Մաս 1 - Եր.: Հեղ. հրատ., 2003:

¹¹ Jim Zanotti, Turkey-U.S. Defense Cooperation: Prospects and Challenges, Congressional Research Service, April 8, 2011; William Hale, Turkish Foreign Policy, 1774-2000, Frank Cass, London-Portland, 2002; Ian O Lesser, Bridge or Barrier? Turkey And The West After The Cold War, Prepared for the United States Air Force and the United States Army., RAND 1992; William J. Durch, Constraining Regional Security: The Role of Arms Transfers, Arms Control, and Reassurance, The Century Foundation Inc., PALGRAVE, 2000; Nicholas Gilby, Turkey and the Arms Trade 1998-2002: A Precipitous Turkey's War Machine, CAAT, London, March 2003, <http://www.caat.org.uk/resources/publications/countries/turkey-precis-0303.pdf>; Weitz Richard, Reducing its Dependence on Foreign Arms Suppliers, Turkey Enhances Its Strategic Autonomy, Turkey Analyst, Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program Joint Center, Vol. 3, No. 14, 2010, <http://www.silkroadstudies.org/new/inside/turkey/2010/100830B.html>;

խնդրահարույց¹²: Ամերիկացի հետազոտող Է. Հեն-Թովն իր «Թուրքիայի ռազմական արդիականացման քաղաքական տնտեսությունը» հոդվածում ներկայացնելով և վերլուծելով Թուրքիայի ռազմական արդիականացման քաղաքականությունը արտաքին քաղաքական ու տնտեսական փոխգործակցության համատեքստում՝ նշում է, որ բանակի արդիականացումը ոչ միայն նպատակ էր, այլ նաև որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության միջոց՝ Արևմուտքի երկրների հետ իր հարաբերություններում: Գնահատելով 1990-ական թթ. նախաձեռնված լայնամասշտաբ ռազմական արդիականացումն ու սպառազինման միտումները՝ հեղինակը գտնում էր, որ տարածաշրջանային մակարդակում Թուրքիայի հարևանների հետ ռազմական անհամաչափությունը հետագայում էլ ավելի խորանալու միտում է ունենալու¹³:

Ռուս որոշ հեղինակներ՝ Ա. Կոսիկովը, Ա. Գուրևը, Ս. Մառտովը, Ա. Արեշևը, Ջ. Գելմանը, Ն. Մոմովը, Ա. Ֆեդինը իրենց ուսումնասիրություններում ևս տարբեր առումներով անդրադարձել են Թուրքիայի ՋՈւ-ի ու այլ երկրների հետ ռազմատեխնիկական համագործակցության խնդիրներին¹⁴: Հատկապես «Իսրայելի ու Մերձավոր Արևելքի ուսումնասիրման ինստիտուտի» (ИИИиБВ) շրջանակում կատարված իրավիճակային ու թեմատիկ ուսումնասիրություններում և հրապարակումներում պարբերաբար անդրադարձներ են եղել ինչպես

¹² Steve Tolbert, Defense Industrial Cooperation, The DISAM Journal, Spring 1995; George B. Allison, Brian W. Daugherty, The Turkish Navy's Quest for Modernisation, The DISAM Journal, Spring 1995; Ed Shaw, The Sky is the Limit: Turkish Air Force Modernization, The DISAM Journal, Spring 1995; E. Hen-Tov, The Political Economy of Turkish Military Modernization, Middle East Review of International Affairs, Vol. 8, No. 4 (December 2004); Michael Robert Hickok, Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization, US Army War College, Parameters (Summer 2000), <http://www.carlisle.army.mil/USAWC/parameters/Articles/00summer/hickok.htm>.

¹³ E. Hen-Tov, The Political Economy of Turkish Military Modernization, Middle East Review of International Affairs, Vol. 8, No. 4 (December 2004)

¹⁴ А. Косиков. Военно-политический потенциал Турции// Востокведный сборник. Вып. 2, М., 2001; А. Гурьев. Турция-Израиль: по пути укрепления военного сотрудничества. <http://www.iimes.ru/rus/stat/2006/24-01-06.htm>; А. Гурьев. О новом вертолетном тендере в Турции. ИИИиБВ, <http://www.iimes.ru/rus/stat/2005/11-03-05.htm>; Андрей Арешев, Вооруженные силы и внешнеполитический курс Турции на современном этапе, Ռազմավարության և անվտանգության հարցեր, Ա. Այվազյանի խմբ., «Հայրենասիրություն» մատենաշար 2, «Արարատ» ռազմավարական կենտրոն, Եր. 2007; З. Гельман. «Анка»-в воздухе. Независимое военное обозрение, No. 32, (27 Августа-2 Сентября), 2010; Н. Сомов. Состояние и перспективы развития ВВС Турции// Зарубежное военное обозрение. № 4, 2009; А. Федин. Военно-морские силы Турции// Зарубежное военное обозрение. № 5, 1997.

Թուրքիայի պաշտպանական ոլորտի խնդիրներին, այնպես էլ ռազմատեխնիկական քաղաքականությանն ու այդ ոլորտում մի շարք երկրների հետ համագործակցության ասպեկտներին¹⁵: Մասնավորապես՝ ռուս հեղինակներից Ս. Մառտովն իր «Թուրքիայի Հանրապետության ռազմատնտեսական քաղաքականությունը և նրա համագործակցությունը արտասահմանյան երկրների հետ» հոդվածում¹⁶ բավական հարուստ փաստերով ներկայացնում է Թուրքիայի ռազմաարդյունաբերական ոլորտում արտերկրների հետ համագործակցությունն ու իրականացված ծրագրերը, ինչը, փաստորեն, այդ բնագավառում ռուսական արևելագիտության ներկայացուցիչների կողմից կատարված առաջին հիմնական ուսումնասիրություններից կարելի է համարել:

Ուսումնասիրության համար օգտագործված աղբյուրների ցանկում բավական մեծ թիվ են կազմում ինչպես թուրքական, այնպես էլ ռուսական ու արևմտյան տարաբնույթ պարբերականները, մամուլը, տեղեկատվական ու վերլուծական էլեկտրոնային կայքերը: Դրանցում գերակշիռ մասը կազմում են հատկապես թուրքական ժամանակակից մամուլն ու պարբերականները, էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրները:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (որոնք իրենց հերթին բաժանվում են 11 ենթագլուխների), եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակներն ու խնդիրները, աշխատանքի գիտական նորույթը, ժամանակագրական սահմանները, մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը, ներկայացված են օգտագործված սկզբնաղբյուրներն ու գրականությունը:

Առաջին գլուխը՝ **«Թուրքիայի Հանրապետության պաշտպանական քաղաքականությունն ու բանակի արդիականացման գործընթացը Սառը պատերազմի ավարտից հետո»** բաժանվում է երեք ենթագլխի: Առաջին ենթագլխում, որը վերնագրված է **«Թուրքիայի պաշտպանական ներուժի**

¹⁵ Об изменениях в военно-политической обстановке на Ближнем Востоке и в Северной Африке (13-19 июня 2011 года), <http://www.iimes.ru/rus/stat/2011/20-06-11a.htm>; А. Гурьев. О российско-турецком военно-техническом сотрудничестве, ИИИиБВ, 27.11.2004; М. Вихрев. "Военные профессионалы Турецкой Республики как резерв государственного управленческого аппарата", Офицерский корпус ближневосточных государств (сборник статей), ИИИиБВ, М., 2004.

¹⁶ М. Мартов. Военно-экономическая политика Турецкой Республики и ее сотрудничество с зарубежными странами// Армия и власть на Ближнем Востоке: от авторитаризма к демократии. (сборник статей), ИИИиБВ, М. 2002.

կայացումն ու զարգացումը Սառը պատերազմի տարիներին», ներկայացվում են ՆԱՏՕ-ին անդամակցումից հետո Թուրքիայի պաշտպանական համակարգի կայացումն ու զարգացումը, Արևմուտքի՝ առաջին հերթին ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի անդամ երկրների կողմից Թուրքիայի բանակի ռազմատեխնիկական կարիքների ապահովման ուղղությամբ ցուցաբերված օգնությունն ու դերակատարությունը: Այս ենթագլխում համառոտ ներկայացվում է նաև 1980-ական թթ. հատկապես ԱՄՆ-ի կողմից թուրքական բանակի արդիականացման ուղղությամբ իրականացված ծրագրերն ու այդ ոլորտում համագործակցությունը: Թուրքիայի ԶՈՒ-ի արդիականացման ու ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման հարցում էական նշանակություն ունեցավ հատկապես 1980 թ. մարտի 29-ին ստորագրված «Պաշտպանական և տնտեսական համագործակցության» մասին պայմանագիրը, որից հետո ամերիկյան կողմը զգալիորեն մեծացրեց ռազմական ու անվտանգության ոլորտում Թուրքիային տրվող աջակցությունը:

Հաջորդ՝ **«Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հիմնական միտումները Սառը պատերազմի ավարտից հետո»** ենթագլխում ներկայացվում և վերլուծվում են հետսառըպատերազմյան շրջանում Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հիմնական միտումները: Հատկապես Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիան վերածնակերպեց իր պաշտպանական քաղաքականությունը՝ փորձելով իր պայն համապատասխանեցնել նոր աշխարհաքաղաքական փոփոխություններին: Չնայած Թուրքիան դեռ անհանգստություն էր զգում ԽՍՀՄ-ի հետ իր նախկին սահմանի հարևանությամբ ընթացող զարգացումներից, այդուհանդերձ, ռազմավարական հիմնական առաջնահերթությունը թեքվեց դեպի հարավ՝ Իրաքից, Իրանից, Սիրիայից եկող նոր վտանգներին և քրդական հիմնախնդրին: 1990-ական թթ. սկզբին Թուրքիայի ռազմաքաղաքական դեկավարության համար առաջնային էին համարվում հատկապես Մերձավոր Արևելքից Թուրքիային սպառնացող մարտահրավերները: 1990-ական թթ. թուրք ռազմական պատասխանատուները Ռուսաստանը, Հունաստանը, Իրաքը, Իրանը և Սիրիան դիտում էին որպես Թուրքիայի հիմնական սպառնալիքներ՝ ելնելով այդ երկրների կողմից Թուրքիայի նկատմամբ տարածքային հավակնություններից և թուրքական սահմանին ռազմական ուժեր կենտրոնացնելու նրանց ռազմական կարողություններից: 1990-ական թթ. Թուրքիայի ռազմական հայեցակարգը կառուցված էր այսպես կոչված «երկու և կես» պատերազմի ռազմավարության հիման վրա: Այդ հայեցակարգի համաձայն՝ Թուրքիան պետք է պատրաստ լիներ լայնածավալ ռազմական գործողություններ մղել միաժամանակ երկու ճակատներում՝ էգեյան և հարավային, ինչպես նաև երկրի ներսում: Թուրքիայի պաշտպանական հայեցակարգում 1990-ական թթ. վերջին սկզբունքային նոր

ռազմավարություն հայտնվեց, ըստ որի՝ երկրի ԶՈՒ-ը պատրաստ են լինելու կանխել Թուրքիայի դեմ հարձակումներն ու սպառնալիքները մինչև բուն թուրքական տարածքին հասնելը: Անկարայի պաշտպանական հայեցակարգի «առաջնային-վաղահաս պաշտպանության» ռազմավարությունը ենթադրում էր ռազմական գործողությունների սկսման դեպքում դրանք կանխել երկրի սահմաններից դուրս՝ զինված գործողությունները փոխադրելով թշնամու տարածք: Թուրքական պաշտպանական նոր ռազմավարության մեջ համընդհանուր անվտանգության ու պաշտպանության սկզբունքների հետ միասին ներառվեց կանխարգելիչ հարվածի սկզբունքը, որն ընդհանուր առմամբ նախատեսում էր «առաջնային ճակատային պաշտպանություն» և «ճգնաժամային իրավիճակներում ներքին անվտանգության ապահովման համալիր միջոցառումներ»: Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հիմքում ընկած էր ԶՈՒ-ի շարունակական հզորացման ու տարածաշրջանում ռազմական գերակայության հասնելու սկզբունքը: Մերձավոր Արևելքում տեղի ունեցած զարգացումները, Ս. Հունեյիի վարչակարգի տապալումը, Միքիայի շարունակական թուլացումն ու Արևմուտքի կողմից մեկուսացման քաղականությունը, Իրանի միջազգային մեկուսացումը բարենպաստ հող նախապատրաստեցին Թուրքիայի համար՝ տարածաշրջանային գերտերության կարգավիճակ ձեռք բերելու և ռազմաքաղաքական ազդեցությունը մեծացնելու առումով: Թուրքական հավակնոտ տարածաշրջանային արտաքին քաղաքականության ռազմավարության մեջ կարևորագույն դեր էր վերապահված այդ երկրի ԶՈՒ-ին, որի շարունակական սպառազինումն ու արդիականացումը դիտվում էր որպես տարածաշրջանային դերակատարության բարձրացման կարևորագույն գործոններից: Այս ենթադրյալում վերլուծվում են նաև Թուրքիայի ազգային անվտանգության հայեցակարգային որոշ հիմնական դիրքեր, որոնք վերաբերում են պաշտպանական քաղաքականությանն ու ռազմաքաղաքական գործոններին: Երրորդ՝ «Թուրքիայի բանակի արդիականացման գործընթացը 1990-ական թվականներին» ենթադրյալում նշվում է, որ Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի սահմանների մոտ անկայունության օջախներն ու անորոշությունը թուրքական զինվորական վերնախավի համար առաջնահերթություն դարձրեցին ռազմական հզոր մեքենայի կառուցումն՝ ի հայտ եկող տարածաշրջանային նոր մարտահրավերներին ու թուրքական պետության ունիտարությանը վտանգող ներքին անջատողականությանը դիմակայելու համար: Թուրքիայի ռազմական արդիականացման հիմքերը դրվեցին հասկապես 1991 թ. Պարսից ծոցի պատերազմի իրադարձություններից հետո, քանի որ Թուրքիայի զինվորական շրջանակները պարզ հասկացան, որ երկրի ԶՈՒ-ն իրենց թույլ և արդեն հնացած սպառազինությամբ չեն կարող դիմագրավել 21-րդ դարի

մարտահրավերներին: Ըստ այդմ՝ Թուրքիան ձեռնարկեց խոշորամասշտաբ ծրագրեր բանակի արդիականացման ուղղությամբ: Ըստ ամերիկյան տվյալների՝ ողջ 1990-ականներին Թուրքիայի կողմից սպառազինության ներկրումների ընդհանուր արժեքը կազմել է մոտ 19 մլրդ դոլար: Աշխատանքում մանրամասն ներկայացվում են բանակի ու սպառազինության արդիականացման ուղղությամբ Թուրքիայի իրականացրած ծրագրերը, սպառազինությունների մրցավազքը Թուրքիայի ու Հունաստանի միջև, բանակի արդիականացման հարցում թուրք-իսրայելական ռազմական համագործակցությունը:

Երկրորդ գլուխը, որը վերնագրված է «Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծումն ու զարգացումը», բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին՝ «Ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծումն ու կազմակերպչա-կառուցվածքային բազայի հիմնումը» վերնագրված ենթագլխում հանգամանորեն ուսումնասիրվում են Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծման նախադրյալները, կազմակերպչա-կառուցվածքային բազայի ստեղծումն ու այդ ոլորտի ռազմավարությունը: Թուրքական բանակի սպառազինության համալրման նոր մոտեցումների ու ռազմաարդյունաբերության զարգացման առումով էական նշանակություն ունեցավ Կիպրոսի հյուսիսային մասի գրավումից հետո Թուրքիայի նկատմամբ ամերիկյան զենքի էմբարգոն, որը նյութական վնասներից զատ, օրակարգ բերեց սպառազինման հարցում բանակի ինքնաբավության անհրաժեշտության հարցը: 1970-ականների կեսերին անկախ, ազգային ռազմական արդյունաբերություն ունենալու համար նախնական կապիտալի հավաքման ուղղությամբ առաջին քայլերն արվեցին: 1985 թ. ստեղծվեց «Պաշտպանական արդյունաբերության զարգացման և աջակցության վարչությունը (Savunma Sanayii Geliştirme ve Destekleme İdaresi Başkanlığı)», որը 1989 թ. վերակազմավորվեց որպես Savunma Sanayii Mustesarlığı: Նորաստեղծ այդ մարմինը իրականացնելու էր միաժամանակ թե՛ ռազմական արդյունաբերության զարգացմանն ուղղված նախագծեր, և թե՛ արտերկրից սպառազինության մատակարարման խնդիրները: Հաջորդ կարևոր քայլը եղավ այն, որ Թուրքիայի ԶՈՒ-ի ցամաքային, ռազմաօդային ու ռազմածովային ուժերի զարգացման հիմնադրամները 1987 թ. միավորվեցին «Թուրքական զինված ուժերի զարգացման հիմնադրամի» (ԹԶՈՒԶՀ, թուրք. Türk Silahlı Kuvvetleri Gűçlendirme Vakfi) ներքո: Նույն թվականին ԹԱՄԺ-ի կողմից ընդունված օրենքով այդ հիմնադրամը ազատվեց բոլոր տեսակի հարկային պարտավորություններից: 1987 թ. այն միավորում էր 16 ընկերություն:

Միայն 70-80-ական թթ. Թուրքիայում հիմնվեց շուրջ 30 ռազմաարդյունաբերական ընկերություն, ինչին նպաստեց նաև պետական

միջամտությունն ու այդ ոլորտում որդեգրած նոր ռազմավարությունը: Ոլորտի ընկերությունների համախմբման ու գործունեության համակարգման նպատակով 1990 թ. ստեղծվեց «Ռազմաարդյունաբերողների միությունը» (SASAD), որը ռազմաարդյունաբերության ոլորտում գործող թուրքական ընկերություններին համախմբեց իր հովանու ներքո: 1991 թ. SASAD-ին անդամակցում էին 21 ընկերություններ, ինչը մեկ տարի հետո ավելացավ՝ դառնալով 33: Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման ռազմավարությունն ու կարևոր սկզբունքներն իրենց արտացոլումը գտան 1998 թ. մայիսի 25-ին թուրքական կառավարության կողմից հաստատված «Թուրքական ռազմական արդյունաբերության քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները» փաստաթղթում: Փաստաթուղթը վերաբերում էր ռազմական արդյունաբերության զարգացման ռազմավարությանն ու սպառազինության ապահովման հիմնական սկզբունքներին: Աշխատանքում անդրադարձ է կատարվում նաև ռազմաարդյունաբերության օրենսդրական ու հայեցակարգային դրույթներին ու ռազմավարությանը: Երկրորդ՝ «Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման միտումները» ենթագլուխը լուսաբանում և վերլուծում է 1990-ական թթ. սկսած ռազմաարդյունաբերության ծրագրերը, գրանցած ցուցանիշներն ու հիմնական միտումները: Հանգամանորեն թվային ցուցանիշներով ներկայացվում է այդ ոլորտում Թուրքիայի գրանցած հաջողությունները և բանակի արդիականացման գործում ռազմաարդյունաբերական համալիրի դերակատարությունը: Եթե մինչև 90-ական թթ. Թուրքիան հիմնականում բանակի կարիքների համար գնում էր պատրաստի սպառազինություն արտերկրից, ապա 90-ականներից սկսեց իրականացնել մի շարք համատեղ ռազմաարդյունաբերական նախագծեր այլ երկրների հետ, իսկ վերջին տարիներին իրականացնում է ռազմաարդյունաբերական ինքնուրույն մշակումներ ու արտադրություն: Եթե 1996 թ. դրությամբ թուրքական ռազմաարդյունաբերական համալիրի կողմից իրականացվում էին շուրջ 4 տասնյակ ռազմաարդյունաբերական նախագծեր, ապա 2006 թ. դրանց թիվը կազմում էր 110՝ 15 մլրդ դոլար ընդհանուր արժեքով: 2010 թ. դրությամբ իրականացվող նախագծերի թիվը կազմել է 269, իսկ նախագծերի ստորագրված պայմանագրերի ընդհանուր արժեքը՝ ավելի քան 24 մլրդ դոլար: Հիմնավորվում է այն, որ Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրը լուրջ հաջողություններ է գրանցել այդ երկրի ԶՈՒ-ի ռազմատեխնիկական կարիքների ապահովման գործում: Ըստ այդմ, պաշտոնական տվյալների համաձայն, եթե 2003 թ. տեղական ռազմաարդյունաբերության միջոցով թուրքական ԶՈՒ-ի սպառազինության կարիքների ապահովման ցուցանիշը կազմում էր 25 %, ապա 2008 թ. այն հասավ շուրջ 44.2 %-ի, 2009 թ.՝ 45.7 %-ի, իսկ 2010 թ. այն գերազանցեց պետական կանխատեսումները՝ հասնելով 52.1 %-ի: Դրա հետ մեկտեղ

ավելացան նաև թուրքական արտադրության ռազմական նշանակության միջոցների ու տեխնիկայի արտահանման ծավալները: Երրորդ՝ «Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրը. ռազմատեխնիկական համագործակցության միտումները Ադրբեջանի, Վրաստանի և կենտրոնասիական թյուրքալեզու երկրների հետ» վերնագրված ենթագլուխում ցույց է տրվում որպես ռազմական մատակարար հանդես գալու Թուրքիայի քաղաքականությունն ու հավակնությունները: Ըստ այդմ՝ ռազմաարդյունաբերության բնագավառում գրանցած հաջողությունների հիման վրա Թուրքիան քայլեր ձեռնարկեց հանդես գալու նաև որպես այլ երկրներին ռազմատեխնիկական արտադրանքի մատակարար: Եթե մի կողմից Արևմտյան զարգացած երկրների հետ իր ռազմական համագործակցության մեջ Թուրքիան ինքն էր հանդիսանում սպառազինության ոլորտում դեռևս մեծ կախում ունեցող երկիր և օգտվում այդ երկրներից թե տեխնոլոգիական, և թե ռազմական տեխնիկայի ուղղակի մատակարարումներից, ապա հատկապես վերջին տարիներին, շնորհիվ իր ռազմաարդյունաբերության զարգացման, ինքն էր փորձում դառնալ այնպիսի երկրների մատակարար, որոնց նկատմամբ ռազմատեխնիկական առումով ունի զգալի գերակայություն և ռազմաքաղաքական հավակնություններ: Հատկապես 1990-ական թթ. կեսերից Թուրքիան սկսեց քայլեր ձեռնարկել որոշ երկրների ԶՈՒ-ի արդիականացման գործում դերակատարություն ստանձնելու ուղղությամբ, որի հնարավորությունը, մեծ հաշվով, տալիս էր սեփական ռազմաարդյունաբերական համալիրի առկայությունը: Թուրքիան, մեծամասամբ, սկսեց արտահանել ռազմական փոխադրամիջոցներ, գրահամբեռներ, հրթիռահրետանային համակարգեր, ռազմածովային միջոցներ ու թեթև սպառազինություն: Հիմնականում արտահանվել են Ադրբեջան, Վրաստան, Ղազախստան, Դրոգոստան, Մալայզիա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Սաուդյան Արաբիա, արաբական մի շարք այլ երկրներ, Բոսնիա-Չերցեզովինա, Ալբանիա, Պակիստան և այլն: Աշխատանքում հանգամանորեն ներկայացվում է հատկապես Թուրքիայի ռազմատեխնիկական համագործակցությունը Ադրբեջանի, Վրաստանի և կենտրոնասիական թյուրքալեզու երկրների հետ:

Երրորդ գլուխը, որը վերնագրված է «Բանակի համալիր արդիականացման ծրագրերն ու կառուցվածքային բարեփոխումների խնդիրը 21-րդ դարի առաջին տասնամյակում», կազմված է հինգ ենթագլուխներից:

Առաջին՝ «Թուրքիայի անվտանգության ու պաշտպանական ոլորտի համակարգային բարեփոխումների խնդիրը » ենթագլխում ներկայացվում են Թուրքիայի ԶՈՒ-ի, անվտանգության մարմինների համակարգում իրականացված կազմակերպչական ու կառուցվածքային բարեփոխումները: 1990-ական թթ. սկզբներից բանակի արդիականացման շրջանակներում որոշ փոփոխություններ իրականացվեցին նաև կազմակերպչա-կառուցվածքային

առումներով: Մասնավորապես, ՅՈՒՆ-ում մեծամասամբ վերացվեցին դիվիզիոններն ու գնդերը՝ դրանց փոխարեն ստեղծվելով բրիգադներ ու գումարտակներ, ինչն էլ զգալիորեն մեծացրեց ուժերի ճկունության ու մոբիլության հնարավորությունները: ՅՈՒՆ-ը սկսեցին կազմավորվել հիմնականում կորպուս-բրիգադային համակարգով: Աստիճանաբար դիվիզիոն կառուցվածքը փոխարինվեց ամերիկյան տիպի բրիգադներով: 90-ական թթ. սկսած իրականացվում էր ՋՈւ-ում արհեստավարժ, պրոֆեսիոնալ զինծառայողների համալրում, ինչը հնարավորություն էր տալիս կարևորագույն ստորաբաժանումները կազմել բացառապես արհեստավարժ զինծառայողների հիմքի վրա: Անվտանգության համակարգում էական փոփոխություններ իրականացվեցին հատկապես ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ուղղությամբ, ստեղծվեցին համակարգող նոր մարմիններ:

Երկրորդ՝ «Ցամաքային ուժերի արդիականացումն ու ռազմարդյունաբերությունը» վերնագրված ենթագլխում հանագամուրեն վեր են հանվում ՅՈՒՆ-ի արդիականացման ու սպառազինման ուղղությամբ իրականացված ծրագրերը, այդ կարիքների ապահովմանն ուղղված տեղական ռազմարդյունաբերական ընկերությունների նախագծերն ու ձեռքբերումները:

Երրորդ՝ «Ռազմաօդային ուժերի արդիականացման ծրագրերն ու հակաօդային պաշտպանության զարգացմանն ուղղված քայլերը» ենթագլուխը հանգամանորեն ցույց է տալիս այդ գործերի արդիականացմանն ուղղված քայլերը, ծրագրերն ու նախագծերը: Թուրքիայի բանակի արդիականացման միտումներն ավելի ակնհայտ են հատկապես ՌՕՈՒ-ում, քանի որ շարունակաբար համալրվում են նորագույն ժամանակակից սպառազինությամբ: Հատկապես նորագույն կործանիչների ձեռքբերման, անօդաչու թռչող սարքերի ձեռքբերման ու արտադրության միտումները նոր որակ են հաղորդում Թուրքիայի այդ զորատեսակին: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հատկապես Թուրքիայի հակաօդային պաշտպանության զարգացման ուղղությամբ իրականացված ծրագրերին, քանի որ Թուրքիայի կողմից այն դիտվում է առաջնահերթ կարևորության հարց: Այս համատեքստում աշխատանքում դիտարկվում են նաև մի շարք երկրների հետ Թուրքիայի ռազմատեխնիկական համագործակցության ասպեկտներն ու ոլորտները:

Չորրորդ՝ «Ռազմածովային ուժերի արդիականացման նախագծերը» վերնագրված ենթագլխում ուսումնասիրվում են ՌՕՈՒ-ում իրականացված արդիականացման միտումները, ձեռնարկված քայլերը, տեղական ռազմարդյունաբերական ընկերությունների միջոցով բանակի կարիքների ապահովման նախագծերը: Թուրքական մի շարք ընկերություններ ինքնուրույն ու արտերկրի ընկերությունների հետ համատեղ ներգրավված

էին Թուրքիայի ռազմական նավատորմի կարիքների համար ռազմական տարատեսակ նավերի արտադրության գործընթացում:

Հինգերորդ՝ «Թուրքիայի «տիեզերական նախագիծը»՝ որպես բանակի արդիականացման բաղկացուցիչ» ենթագլուխը վերաբերում է տիեզերական հետազոտությունների ու տիեզերական հետախուզության ոլորտում իրականացվող ռազմավարության ուսումնասիրությանը: Թուրքիայի «տիեզերական նախագիծը» համարվում է բանակի համալիր արդիականացման բաղկացուցիչ և լրջորեն կարևորվում այդ երկրի ռազմաբաղաձեռնական դեկավարության կողմից: Հատկանշական է այն, որ 2010 թ. «Ազգային անվտանգության քաղաքական փաստաթղթում» իրականացված վերախմբագրումների արդյունքում դրանում առաջին անգամ ամրագրվեց տիեզերական տեխնոլոգիաների զարգացման ու հետախուզական նպատակներով արբանյակների ավելի ակտիվ կիրառության կարևորությունը: Այդ ոլորտում ներգրավվեցին են նաև մի շարք թուրքական ռազմարդյունաբերական ու գիտահետազոտական ընկերություններ, որոնք իրականացնում են հետազոտական ու արտադրական ծրագրեր:

Եզրակացության մեջ ամփոփվում են ատենախոսության հիմնական արդյունքները, արվում եզրակացություններ:

20-րդ դարի վերջերին և 21-րդ դարի սկզբներին Թուրքիան վերածնակերպեց ինչպես իր արտաքին քաղաքականությունը, այնպես էլ՝ պաշտպանական քաղաքականությունը՝ համապատասխանեցնելու նոր աշխարհաքաղաքական իրողություններին ու մարտահրավերներին: ՋՈւ-ի համալիր արդիականացման ռազմավարությունն աննախադեպ էր հանրապետական Թուրքիայի պատմության մեջ, քանի որ թուրքական բանակը համալրվում էր ժամանակակից սպառազինությամբ ու դրանում էական դերակատարություն ստանձնում ազգային ռազմարդյունաբերական համալիրը: Արդիականացման ծրագրերն ու իրականացված քայլերը մեծ հաշվով Թուրքիան տարածաշրջանում ամենաազդեցիկ ու գերիշխող ռազմական ուժ դարձնելու նպատակ են հետապնդում, ինչը պայմանավորված է այդ երկրի աշխարհաքաղաքական հավակնություններով:

1. Հանրապետական Թուրքիայի պաշտպանական համակարգի կայացման ու զարգացման գործում բավական մեծ է եղել ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի անդամ երկրների աջակցությունը: Հենց ՆԱՏՕ-ին անդամակցելուց հետո այդ երկրի ՋՈւ-ը կազմավորվեցին ամերիկյան օրինակով ու շարունակաբար սկսեցին համալրվել արևմտյան ռազմական տեխնիկայով: Թուրքիայի ՋՈւ-ի զարգացման գործում առանձնապես մեծ է եղել հատկապես ԱՄՆ-ի դերը:

2. Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի պաշտպանական ու անվտանգային քաղաքականությունն էական վերափոխումների ենթարկվեց, ինչը պայմանավորված էր նոր աշխարհաքաղաքական իրողություններում Թուրքիային ուղղված մարտահրավերների, սպառնալիքների վերագնահատմամբ: Թուրքիան 90-ական թթ. բավական լարված հարաբերությունների մեջ էր իր որոշ հարևանների հետ և նրանց դիտարկում էր որպես ռազմական սպառնալիք ներկայացնող երկրներ: Նման իրավիճակում Թուրքիայի ռազմաքաղաքական վերնախավի համար առաջնահերթ խնդիր էր դիտվում պաշտպանական համակարգի զարգացումն ու հզոր ու զերսպառազինված ՋՈւ-ի առկայությունը, ինչի նպատակով էլ նախաձեռնվեցին արդիականացման լայնամասշտաբ ծրագրեր:

3. 1990-ական թթ. նախաձեռնված բանակի արդիականացման գործընթացը նոր աշխարհաքաղաքական փոփոխություններին համարժեք պատասխանելու գործընթաց էր: Բացի այդ, մի շարք զարգացումներ ցույց տվեցին, որ Թուրքիայի ՋՈւ-ը պատրաստ չէն ժամանակակից ռազմական գործողությունների իրականացմանը: 1990-ական թթ. Թուրքիայի ՋՈւ-ի արդիականացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները բավական արդյունավետ եղան, ինչը հնարավորություն տվեց թուրքական բանակն ապահովել ժամանակակից սպառազինությամբ, իրականացնել կառուցվածքա-կազմակերպչական բարեփոխումներ, համապատասխանեցնել արդի չափանիշներին: 1990-ական թթ. Թուրքիայի ՋՈւ-ի սպառազինության արդիականացման շրջանակում հիմնականում ԱՄՆ-ից ու եվրոպական երկրներից ձեռք բերված ռազմական տեխնիկան և սպառազինությունը կարելի է համարել ժամանակակից և պահանջված, ինչը զգալիորեն բարձրացրեց թուրքական բանակի մարտունակությունը:

4. 1970-ական թթ. վերջերից Թուրքիայում առաջնային դարձավ տեղական, ազգային ռազմաարդյունաբերության զարգացման խնդիրը, իսկ 1980-ական թթ. կեսերից պետական հատուկ ռազմավարության շնորհիվ հնարավոր դարձավ դնել ազգային ռազմաարդյունաբերական համալիրի հիմքերը: Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրի ենթակառուցվածքների ստեղծման ու տեխնոլոգիական աջակցության առումով մեծ է եղել ՆԱՏՕ-ի անդամ երկրների ու հատկապես ԱՄՆ-ի աջակցությունը:

5. Արդեն 1990-ական թթ. բանակի արդիականացման գործում մեծ դերակատարություն տրվեց տեղական ռազմաարդյունաբերական համալիրին, որի զարգացումը մեծ հաշվով նպատակ ուներ նվազեցնելու երկրի կախվածությունն արտաքին մատակարարներից և

սեփական բանակի կարիքներն ապահովելու տեղական միջոցներով: Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումն ու այդ ոլորտում զրանցած հաջողությունները պետական հստակ ռազմավարության ու ներդրումների արդյունք էին: Ռազմական արդյունաբերության զարգացման ուղղությամբ Թուրքիայի կողմից իրականացված քաղաքականությունը կարելի է համարել հաջողված: Ձեռքբերումներն այդ ոլորտում բավական ակնհայտ են: Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը ոչ միայն հնարավորություն է տալիս Թուրքիային ապահովել իր բանակի ռազմատեխնիկական կարիքների մի մասը, այլ նաև դուրս գալ սպառազինության միջազգային շուկա: Ռազմական ներուժն ու ռազմաարդյունաբերական համալիրի ձեռքբերումները զուգորդվում էին Թուրքիայի տարածաշրջանային, արտաքին քաղաքական ու ռազմաքաղաքական հավակնություններով:

6. Պաշտպանության ու անվտանգության համակարգում իրականացված կազմակերչա-կառուցվածքային, գործառույթային բարեփոխումները պայմանավորված էին անվտանգության մարմինների գործունեության ոլորտում առկա թերություններով ու բացթողումներով: Անվտանգության մարմինների միջև փոխգործակցության համակարգման ուղղությամբ իրականացված քայլերը միտված են անվտանգության մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանն ու այդ ոլորտի առավել արդյունավետ համակարգմանը:

7. Հատկապես 2000-ական թթ. առաջին տասնամյակի Թուրքիայի ռազմական արդիականացման նախագծերն ու ծրագրերը, ձեռքբերվող սպառազինության փաստերը բերում են կարևոր հետևության: 1990-ականների վերջից սկսված լայնամասշտաբ արդիականացման ռազմավարությունը և ավելի ուշ արդեն գործադրված քայլերը աննախադեպ են Թուրքիայի սպառազինման առումով: Նույնիսկ Սառը պատերազմի ժամանակաշրջանում, երբ ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի կողմից տրամադրվում էր հսկայական ֆինանսական ու նյութատեխնիկական ռազմական օգնություն, դրանով հանդերձ թուրքական բանակը զուտ ռազմատեխնիկական, արդիական սպառազինության առումով բավական թույլ էր և զիջում էր ՆԱՏՕ-ի շատ անդամների: Չնայած զգալի հազվեցվածությանը՝ թուրքական բանակի սպառազինության հիմնական մասը բավականաչափ հնացած էր և ժամանակի առումով չէր համարվում արդիական: Ձեռնարկված արդիականացման քայլերը, ձեռքբերված և դեռ սպասվող սպառազինությունն արդեն թուրքական բանակին տալիս են նոր որակ՝ ժամանակակից սպառազինության առումով և զգալի զերսպայություն իր հարևանների նկատմամբ:

8. Թուրքական բանակի արդիականացումն ավելի ակնառու է դառնում հատկապես ՌՕՌ-ում: Թուրքիայի ռազմաքաղաքական դեկլարությունը, կարևորելով ռազմական ավիացիայի դերը ժամանակակից ռազմական գործողություններում, առանձանահատուկ ուշադրություն դարձրեց հատկապես ռազմական ավիացիայի արդիականացմանը: Ի տարբերություն նախորդ ժամանակների՝ հատկապես 2000-ական թթ. առաջին տասնամյակում ձեռնարկված թուրքական օդուժի արդիականացման ծրագրերի արդյունքում հնարավոր կլինի այն մոտեցնել ժամանակակից մարտահրավերներին համապատասխան լիովին արդիական չափանիշներին:

9. Թուրքիայի սպառազինման առումով բավական հավակնոտ ծրագրեր առաջադրվեցին հատկապես իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման տարիներին: Թուրքիայի ԶՈւ-ի արդիականացման տեսանկյունից էական ու հիմնարար նշանակություն ունեցող նախագծերի մեկնարկն ու պայմանագրերի ստորագրումը՝ ազգային տանկերի արտադրություն, 5-րդ սերնդի կործանիչների ձեռքբերում, հեռահար ՀՕՊ համակարգի զարգացում, տիեզերական հետախուզության համակարգերի ստեղծում, միջին հեռահարության հրթիռային միջոցների արտադրություն և այլն, հենց առաջադրվեցին ԱԶԿ-ի կառավարման տարիներին:

10. Թուրքիայի ռազմական ներուժն ու ազգային ռազմաարդյունաբերական համալիրը Թուրքիային մեծ հաշվով հնարավորություն են տալիս հանդես գալու որպես ռազմական մատակարար, ինչը լուրջ հաղթաթուղթ է դիտվում այդ երկրի ռազմաքաղաքական հավակնությունների իրականացման ճանապարհին: Տարբեր երկրներին ռազմական օգնության տրամադրումն առաջին հերթին զուգորդվում է Թուրքիայի տարածաշրջանային, արտաքին քաղաքական ու ռազմաքաղաքական հավակնություններով, ինչն առավել պարզորոշ է դառնում հատկապես Ադրբեջանի, Վրաստանի ու թյուրքալեզու երկրների պարագայում: Մասնավորապես ակտիվ զարգացման միտումներ ունի թուրքադրբեջանական համագործակցությունը ռազմաարդյունաբերության ոլորտում:

11. Թուրքիայի աննախադեպ սպառազինման միտումներն ու գերռազմականացումը հղի են բավական լուրջ մարտահրավերներով տարածաշրջանային կայունության ու անվտանգության համար: Իր անմիջական հարևանների նկատմամբ ռազմական գերակայությունն ու ռազմականացման տեմպերը կարող են տարածաշրջանում բերել նոր ապակայունացում ու ռազմական բախումներ: Հատկապես վերջին շրջանում իր որոշ հարևանների ու տարածաշրջանի երկրների՝

մասնավորապես Կիպրոսի Հանրապետության ու Սիրիայի Արաբական Հանրապետության հետ ռազմական վերջնագրերի լեզվով խոսելը՝ պայմանավորված են նրանց նկատմամբ ռազմական ուժերի գերակայությամբ ու հնարավորություններով: Այս համատեքստում նկատի ունենալով Թուրքիայի անվտանգային քաղաքականության անկանխատեսելիության բարձր աստիճանը, կառավարող շրջանակների ագրեսիվ վարքագիծը, ռազմաքաղաքական հավակնությունները և իր մի շարք հարևանների հետ ոչ բարիդրացիական հարաբերությունները՝ կարելի է եզրակացնել, որ Թուրքիայի կողմից ռազմական ուժի կիրառման հավանականությունը բավական բարձր է:

Հավելվածում ներկայացված է Թուրքիայի ԶՈւ-ի կառուցվածքը:

Մենագրություններ

1. Հովսեփյան Լ., Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմարդյունաբերությունը, ՀՀ Նախագահի աշխատակազմի Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ-ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Եր.: ՄՈԱ հրատ. 2010, 208 էջ:

2. Овсеян Л., Иванов В. Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии. Динамика и основные тенденции развития -Ер.: Институт политических исследований, 2010, 167 с.

Հոդվածներ

1. Հովսեփյան Լ., Թուրքիայի զինված ուժերի արդիականացման խնդրի շուրջ, «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ», ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, շ. 3, Երևան 2006, էջ 77-82:

2. Հովսեփյան Լ., Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդն արդի բարեփոխումների համատեքստում, *Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ*, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, շ. 4, Երևան 2006, էջ 114-122:

3. Հովսեփյան Լ., Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության զարգացման միտումներն Ադրբեջանի բանակի բարեփոխումների համատեքստում, *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, շ. XXVI, Երևան 2007, էջ 165-173:

4. Հովսեփյան Լ., Թուրքիայի ռազմական արդյունաբերությունը հրթիռաշինության ոլորտում, *Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ*, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, շ. 6, Երևան 2009, էջ 105-122:

5. Հովսեփյան Լ., Թուրքիայի հակաօդային և հակահրթիռային համակարգերը, 21-րդ Դար, «Նորավանք» ԳԿՀ, N. 3(25), 2009. էջ 99-114:

6. Հովսեփյան Լ., Հովհաննիսյան Ա., Թուրքիայի ՀՕՊ-Ի և ՀՀՊ համակարգերի արդիականացման ռազմավարական նախագծերի շուրջ, *Հայկական բանակ*, 1 (63). 2010, էջ 115-122:

7. Овсеян Л. Реформы Совета Национальной Безопасности Турции в контексте демократических преобразований, *Проблемы национальной стратегии*, Российский институт стратегических исследований, Москва, No. 2, 2010, с. 41-54.

8. Овсеян Л. Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Центральной Азии: общая динамика развития, *"Центральная Азия и Кавказ"*, Журнал социально-политических исследований, № 2, (13), СА&СС Press, Швеция, 2010, с. 93-100.

9. Овсеян Л. Основные тенденции и перспективы Турецко-Российского военно-технического сотрудничества, *"Центральная Азия и Кавказ"*, Журнал социально-политических исследований, № 3, (14), СА&СС Press, Швеция, 2011, с. 46-53.

10. Հովսեփյան Լ., Թուրքիայում ՆԱՏՕ-ի միասնական ՀՀՊ համակարգի ռադիոտեղորոշիչ կայանի տեղակայման ռազմաքաղաքական նշանակությունը, Ժամանակակից Եվրասիա, Հատոր I(1), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2012, էջ 121-129:

ПРОЦЕСС МОДЕРНИЗАЦИИ ВООРУЖЕННЫХ СИЛ РЕСПУБЛИКИ
ТУРЦИЯ В КОНЦЕ XX - НАЧАЛЕ XXI ВЕКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – “Всемирная история”.

Защита состоится 20-го декабря 2012 г., в 15.00 часов на заседании специализированного совета 006, действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.

РЕЗЮМЕ

В диссертации рассматриваются основные тенденции оборонной политики Турции, процесс комплексной модернизации вооруженных сил и развития военной промышленности. Исследование комплексной модернизации ВС Турции имеет как научное, так и прикладное важное значение. Всестороннее изучение темы актуально не только с точки зрения исследования основных тенденций модернизации и политики ВС Турции в в конце XX - начале XXI вв., но и оценки тенденций милитаризации и вооружений в настоящее время. Целью данной диссертации является исследование модернизации оборонной системы Турции в конце XX - начале XXI вв., выявление тенденции модернизации ВС и осуществленных программ, а также процесса становления и развития военной промышленности.

Диссертация состоит из введения, трех глав, которые разделяются на параграфы, заключения, списка использованных источников и литературы и приложения.

Во введении представлены актуальность темы, основные цели и задачи исследования, научная новизна, временные рамки диссертации, методологическая основа, практическое значение, обзор использованных источников и литературы.

Первая глава диссертации – *“Оборонная политика и процесс модернизации армии Республики Турция после окончания Холодной войны”* - состоит из трех параграфов. В первом параграфе- *“Становление и развитие оборонного потенциала Турции в период Холодной войны”* представлено становление и развитие оборонной системы Турции после вступления в НАТО, в частности роль и поддержка США и стран членов НАТО по обеспечению военно-технических нужд турецкой армии во время Холодной войны.

Второй параграф первой главы- *“Основные тенденции оборонной политики Турции после окончания Холодной войны”*- посвящен анализу основных

тенденций оборонной политики Турции после периода Холодной войны. В частности, автор приходит к выводу, что после окончания Холодной войны Турция подвергла изменениям свою оборонную политику и концепцию, стараясь привести ее в соответствие с новыми геополитическими изменениями.

В третьем параграфе - *“Процесс модернизации турецкой армии в 1990-ые гг.”*- говорится, что после окончания Холодной войны возникшая у границ Турции нестабильная и неконтролируемая ситуация вынудила турецких военных лидеров усилить ВС для противостояния новым региональным вызовам и внутренним сепаратистским движениям, угрожаям целостности Турецкой республики. Модернизация вооруженных сил получила новый толчок в 1990-х гг. после войны в Заливе, так как турецкие военные осознали, что вооруженные силы страны с уже устаревшими и слабыми вооружениями не смогут противостоять вызовам 21-го века. По этой причине Турция начала осуществлять крупные программы по модернизации армии.

Вторая глава, которая называется *“Создание и развитие военно-промышленного комплекса Турции”* состоит из трех параграфов. Первый параграф - *“Создание военно-промышленного комплекса и организационно-структурной базы”*- посвящен анализу создания комплекса оборонной промышленности и структурно-организационной базы Турции, а также стратегии развития этой отрасли.

Второй параграф - *“Тенденции развития военно-промышленного комплекса”*- описывает и анализирует программы развития военной промышленности, достигнутые показатели и основные тенденции. Подробно в цифровых показателях представлены успехи Турции в этой области и роль ВПК в деле модернизации армии.

Третий параграф - *“Военно-промышленный комплекс Турции: тенденции военно-технического сотрудничества с Азербайджаном, Грузией и центральноазиатскими тюркоязычными странами”* -представляет цели и политику Турции, как поставщика вооружений на примере Азербайджана, Грузии и тюркоязычных стран Центральной Азии. Основываясь на успехах в деле развития военной промышленности, Турция активизировала политику по становлению также поставщиком военно-технической продукции третьим странам.

Третья глава озаглавлена *“Программы комплексной модернизации армии и проблема структурных реформ в первом десятилетии 21-го века”*, и состоит из пяти параграфов. Первый из них - *“Проблема системных реформ в области обороны и безопасности Турции”*- посвящен рассмотрению организационным и структурных реформ в силах безопасности и ВС Турции.

Во втором параграфе - *“Модернизация сухопутных войск и военная промышленность”*- дается подробный анализ программ по модернизации и

перевооружения сухопутных войск, а также представлены проекты местных военно-промышленных компаний.

Третий параграф - *“Программы модернизации военно-воздушных сил и развития противовоздушной обороны”* - подробно описывает программы и проекты по модернизации ВВС. Тенденции модернизации турецкой армии особенно очевидны в ВВС, так как они постоянно оснащаются современными вооружениями. Особенно закупки и производство новейших истребителей и беспилотных летательных аппаратов сказываются на качестве этих войск. Особое внимание уделяется рассмотрению программ развития ПВО Турции, так как эта сфера является приоритетным в этой стране.

Четвертый параграф - *“Проекты модернизации военно-морских сил”* - посвящен анализу тенденций модернизации ВМС, предпринятым мерам и проектам по обеспечению нужд флота при помощи местных военно-промышленных компаний. Некоторые турецкие компании самостоятельно, а также совместно с иностранными компаниями были вовлечены в проекты производства различных военных судов для нужд ВМС Турции.

Пятый параграф - *“Космический проект” Турции как часть модернизации армии* - посвящен анализу стратегии в области космических исследований и космической разведке. “Космический проект” Турции считается частью модернизации армии и уделяется значительное внимание со стороны военно-политического руководства этой страны.

В заключении обобщены основные выводы диссертации.

В приложении представляется структура ВС Турции.

THE PROCESS OF MODERNIZATION OF THE ARMED FORCES OF THE
REPUBLIC OF TURKEY FROM THE TURN OF 20th TO THE BEGINNING OF 21st
CENTURIES

The defense of the dissertation will take place at 15.00, on December 20, 2012 at the meeting of Specialized Council 006 “World History” at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4.

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of “World History” 07.00.02.

SUMMARY

The dissertation aims to address the main tendencies of the Turkish defense policy, the comprehensive modernization of its armed forces, as well as the process of its defense industry development after the Cold War.

The systematic study of the modernization of Turkish Armed Forces has important scientific and practical implications alike. Not only is the compressive study of modernization of the Turkish army important in terms of tracing its major trends and policies within the historical time frame, but also, more significantly, from the perspective of revealing the current trends and dimensions of its militarization and adequately assessing them. The choice of the subject matter and the underlying purpose is to study the modernization efforts of the Turkish defense industry ranging from the turn of the 20th to the beginning of 21st centuries, and, thereby, flash out the major trends of modernization of the Turkish Armed Forces and implemented projects, as well as consider the institution and development of Turkey's defense industry complex.

The dissertation consists of an introduction, three chapters, divided into twelve parts, a conclusion, a bibliography of sources and relevant literature and an appendix.

The first chapter, *“Defense Policy and Army Modernization Process of the Republic of Turkey after the Cold War,”* is divided into three parts. Part one, entitled as *“The Establishment and Development of Turkish Defense Potential During The Cold War,”* analyzes the establishment and development of the Turkish defense system after its membership in NATO, as well as the role and military technical assistance extended to it by the West at large, and the U.S. and NATO member countries in particular. Part two, *“The Main Tendencies of Turkish Defense Policy After the Cold War,”* presents and analyzes the main tendencies of Turkish defense

policy after the Cold War. More specifically, it considers the post-Cold War efforts of Turkey to reformulate its defense policy and readjust it with the new geopolitical shifts.

Part three, *"Modernization Process of the Turkish Army in 1990s,"* considers the modernization processes and policies of the Turkish Armed Forces in 1990s. The foundations for the modernization of Turkish military were laid in 1990s right after the ensuing developments of the Gulf War, when it became crystal clear for the Turkish military circles that the weakness of its armed forces and outdated armaments at its disposal were insufficient to confront the challenges of the 21st century. As a consequence, Turkey commenced the implementation of large scale projects tailored to the modernization of the army.

The second chapter, which is called *"The Establishment and Development of Turkey's Defense Industry Complex,"* consists of three parts.

Part one, *"The Establishment of Defense Industry Complex and its Organizational-structural Basis,"* thoroughly analyzes the background developments with respect to the institution of Turkish military-industrial complex, its organizational-structural foundations and the underlying strategy. Part two, *"Tendencies of Development of Defense Industry Complex,"* focuses on the analysis of military-industrial projects at the beginning of 1990s, as well as the major trends and indicators relating thereto. The tabled format of figures presents a detailed assessment regarding the successes of the Turkish army and the implications of modernization of the military-industrial complex. Part three, *"Turkish Defense Industry Complex: Trends in Military-Technical Cooperation with Azerbaijan, Georgia and the Central Asian Turkic Countries,"* captures the Turkish policy and its ambitions as a military supplier. Given the success scored in this area, Turkey has also taken steps to act as a supplier of military products to other countries.

The third chapter, which is entitled *"Programs of Comprehensive Modernization and the Issue of Structural Reforms of the Army in the First Decade of the 21st Century,"* consists of five parts.

Part one, *"The Issue of Systematic Reforms in Turkey's Security and Defense Sector,"* addresses the organizational and structural reforms of the security segment within the Turkish Armed Forces. Due to organizational-structural reasons, the beginning of 1990s marked the implementation of some changes within the framework of the Army's modernization efforts. Part two, *"Modernization of Land Forces and Defense Industry,"* meticulously considers the range of modernization and supply projects carried out for land forces, and the role of local military-industrial companies, their projects and achievements tailored to these ends. Part three, *"Modernization of Air Forces and the Steps Toward Development of Air Defense,"* presents a detailed analysis of the steps, programs and projects aimed at modernizing the Turkish air forces, since its implications in the Turkish armed

forces is more apparent in this particular sector through the continuous acquisition of modern armaments. In particular, the acquisition of new fighters, the trends of procurement and production of unmanned aerial vehicles (UAV) render a new quality to it. Special attention is also paid to the development of air defense projects, which is of primary importance for Turkey. Part four, *"The Projects of Modernization of Naval Forces"* studies the modernization efforts in the naval forces, as well as the steps taken to ensure its needs through the supply of local military-industrial companies. Individually or through tie-up projects with foreign companies, a number of Turkish companies are involved in meeting the military needs of the Turkish navy, as well as producing various military ships. Part five, *"Turkey's 'Space Project' as a Component of Modernization of The Army,"* deals with the examination of the Turkish strategy in the field of space research and intelligence gathering. Turkish "Space Program" is considered a serious component for the overall modernization of the army and receives due attention of the country's politico-military leadership.

The conclusion summarizes the main findings of the dissertation.

The appendix represents the structure of the Armed Forces of Turkey.

